*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*8 ապրիլի 2006 թ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 մարտի 2006 թվականի N 411-Ն

## ՄՐՑՈՒՅԹՈՎ ԸՆՏՐՎԱԾ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՈՎ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՃՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել մրցույթով ընտրված լրատվամիջոցով հարկադիր աճուրդի ներկայացված պարտադիր հրապարակման ենթակա գույքի տեսակների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Ա. Մարգարյան**

2006 թ. ապրիլի 5
Երևան

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2006 թվականի**
**մարտի 2-ի N 411-Ն որոշման**

## Ց Ա Ն Կ

## ՄՐՑՈՒՅԹՈՎ ԸՆՏՐՎԱԾ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՈՎ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՃՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Անշարժ գույք
Արժեթղթեր
Մշակութային արժեքներ
Երեք միլիոն դրամ գնահատված արժեքը գերազանցող շարժական գույք
Բաժնեմասեր

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**